

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԷՐ)

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES
(COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2017

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և
Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան - նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.),
Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան**
(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան**
(արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Հովիկ Գրիգորյան**
(պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ),
Էդգար Հովհաննիսյան (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Հակոբ Պետրոսյան** (բանասիր. գիտ. թեկն.):

Главный редактор: докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (председатель, ректор ЕГУ, членкор. АН РА, докт. ист. н., проф.), **Ашот Мелконян**
(академик АН РА, докт. ист. н., проф.), **Артակ Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян**
(докт. ист. н., проф.), **Айк Аветисян** (докт. ист. н., проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. н., проф.),
Левон Чугасзян (докт. искусствовед. н., проф.), **Игит Гариббян** (докт. ист. н., проф.), **Генрих Абрамян**
(докт. ист. н., проф.), **Айказ Оганесян** (докт. ист. н., проф.), **Гамлет Петросян** (докт. ист. н., проф.),
Ашот Нерсесян (докт. ист. н., проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук), **Овик Григорян** (канд. ист. н., доц.),
Мхитар Габриелян (канд. ист. н., доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. н., доц.), **Акоп Петросян**
(канд. филолог. наук).

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Aram Simonyan (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.),
Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan**
(Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of
Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of
Arts, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences,
prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences,
prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences),
Hovik Grigoryan (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History,
associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor), **Hakob Petrosyan**
(PhD in Philology).

ISSN 1829-2771 3

Էդուարդ Զոհրաբյան

ՀԱՅ-ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր-Աշխարհակարգ, ռազմաքաղաքական համագործակցություն, պայմանագիր, ազդեցիկ, անվտանգություն, փաստաթղթային պարտավորություններ, ներհասարակական դիսկուրս, ռազմական միջամտություն, սադրանք, հիմնադրույթներ:

1991թ. դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզումից հետո, ԱՊՀ-ի ստեղծման կոչին առաջինն արձագանգեց Հայաստանը: Նույնա մսին Ռուսաստանը ճանաչեց Հայաստանի անկախությունը, իսկ 1992 թ. ապրիլի 3-ին նրանց միջև հատատվեցին պաշտոնական դիվանագիտական միջպետական հարաբերություններ, որից հետո դրանք թևակոխեցին ամենատարբեր ոլորտներում դինամիկ զարգացման և արդյունավետ համագործակցության փուլ¹: Աշխարհաքաղաքական նոր իրողությունների հետևանքով խորհրդային նախկին բոլոր հանրապետությունների առջև ծառայեցավ նոր աշխարհակարգին հարմարվելու և սեփական ազգային շահերը պաշտպանելու խնդիրը: Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը ևս մտավ սեփական ինքնության որոնման նոր փուլ: Ներքաղաքական լուրջ տարածայնություններն ու միջիշխանական թեժ պայքարում ի վերջո՝ 1992-1993 թթ. սահմանագլխին Մոսկվայում հաջողվեց հասնել համեմատաբար կայուն փոխհամաձայնության՝ նախկին Խորհրդային Միության տարածքում վարվելիք քաղաքականության հիմնադրույթների շուրջ: ԱՊՀ երկրների հետ հարաբերություններում ռուսաստանյան քաղաքականության մի շարք նոր հայեցակարգային մոտեցումները, որոնք արդեն 1993 թ. սկզբին հաստատագրվեցին իբրև պաշտոնական քաղաքականության կանխադրույթներ, աչքի էին ընկնում բավականաչափ կոշտ ձևակերպումներով: Ի տարբերություն ոչ հարատև լիբերալ արտաքին քաղաքական «բաղադրիչի» /1991-1992 թթ./ հենց այդ ռազմավարական մոտեցումները շատ շուտով վերածվեցին ՌԴ դոկտրինալ քաղաքականության հիմնադրույթների²: Պաշտոնապես ձևակերպվեց ՌԴ ողջ հետխորհրդային տարածքում հատուկ պատասխանատվության մասին թեզը: Հարավկովկասյան երկրներում Ռուսաստանի դիրքերի ժամանակավոր թուլացումը հաղթահարվեց շատ արագ և 1993 թ. գիտակցելով Ռուսաստանի իրական ազդեցության նշանակությունը թեժ կետերի իրադրության վրա Վրաստանին և Ադրբեյջանին նույնպես միջոց մտնելու ԱՊՀ-ի կազմի մեջ:

Ռուսաստանի ազգային շահերը թելադրում են նրա ներքին և արտաքին քաղաքականության ռազմավարությունը, որը մի կողմից ենթադրում է միջազգային ասպարեզում Ռուսաստանի արժանավայել և ռազմաստրատեգիական հնարավորություններին համապատասխան տեղ և դերակատարություն աշխարհաքաղաքական, տնտեսական, ինտելեկտուալ, մշակութային առումներով, այսինքն Ռուսաստանի կորցրած հնարավորությունների վերականգնում: Մյուս կողմից՝ ԱՊՀ երկրների հետ բազմակողմանի և փոխշահավետ համագործակցության ապահովում և ձգտում դառնալու նրանց համարկման գործընթացի առաջատար, այդ թվում նաև տարածաշրջանային մակարդակներում: Ռուսաստանի նման միտումները համահունչ են նաև ԱՄՆ-ի քաղաքականությանը այն առումով, որ Ռուսաստանը հանդես է գալիս որպես զսպող, սահմանափակող, կանխարգելիչ և կայունացնող գործոն Եվրասիայում: Այս տեսանկյունից Ռուսաստանի դերակատարությունը հարավկովկասյան տարածաշրջանում և մասնավորապես Հայաստանում ապագայում լինելու է ծանրակշիռ ու երկարաժամկետ: Հետխորհրդային տարածքի հեռանկարների վերաբերյալ Ռուսաստանի և Արևմուտքի/ԱՄՆ/ հարաբերություններում ժամանակավոր «ռազմական դադարի» հաստատումը

¹ ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 283, թ.69:

² Концепция внешней политики РФ/1993/ Военная доктрина Российской Федерации/полный текст/ Указ Президента РФ И706, 21.04.2000г.

ժամանակային առումով համընկավ Բ. Ելցինի, Բ. Քլինթոնի նախագահական երկրորդ ժամկետների հետ: Այդ հանգամանքը տարածաշրջանում ռուս-ամերիկյան համագործակցության լավ հնարավորություններ էր ստեղծում¹: 1990-ական թթ. կեսերին Արևմուտքում ամրապնդվեց այն տեսակետը, ըստ որի՝ Հարավային Կովկասում և ԱՊՀ տարածքում որևէ լուրջ նախագծի իրագործումն առանց ՌԴ ուղղակի կամ անուղղակի մասնակցության անիրատեսական համարվեց:

Հաշվի առնելով աշխարհաքաղաքական նոր իրողություններն ու պաշտպանական արդի կարիքները՝ որոշում ընդունվեց արագորեն վերամիավորել նախկին միութենական հանրապետությունները մեկ միասնական պաշտպանական գոտու մեջ: 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրվեց ԱՊՀ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը: Պաշտպանական այդ միության ստեղծման նախաձեռնողը ՌԴ պաշտպանության նախարարությունն էր: Վերջինս վճռորոշ դեր խաղաց արտաքին քաղաքական նոր գերակայությունների ձևավորման գործում: Անհրաժեշտ է նկատել, որ ԱՊՀ սահմաններում միջպետական հարաբերությունները «կարգավորելու» բացառիկ իրավունքը վերապահվում էր Ռուսաստանին: Վերջինիս համար առանցքային էր դառնում ռազմավարական մեկ այլ հիմնադրույթ՝ հետխորհրդային տարածքում ստեղծված «status quo»-ի պահպանումը և ՌԴ հատուկ շահերի գոտում «երրորդ ուժերի» հաստատման փորձերի արգելափակումը: Արդեն 1990-ականների կեսերին ՌԴ անվտանգության քաղաքականության գլխավոր ուղղությունները տարածաշրջանում ավելի հստակ ուրվագիծ ստացան: Տուրք տալով ոչ վաղ անցյալի գործելակերպին փորձ արվեց Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում դարձնել նոր ուժային դասավորվածության անբաժան բաղադրիչ այն պայմանով, որ տարածաշրջանային զարգացման ռազմավարական գերակայությունների որոշման գործում Մոսկվային վերապահվի «վերահսկիչ փաթեթը»²: Ստեղծված իրավիճակում Մոսկվան առաջ քաշեց ԱՊՀ շրջանակներում «տարբեր արագությունների ինտեգրման» գաղափարը: Հաշվարկն արված էր այն պետությունների համարկման վրա, որոնք առավել շատ էին ցանկանում և պատրաստ էին դրան: Հաշվի առնելով, որ երկու երկրների ռազմավարական շահերը համընկնում են՝ հարավկովկասյան տարածաշրջանում առավել առաջանցիկ հարաբերություններ հաստատվեցին Հայաստանի հետ: Դրա վառ ապացույցը պարբերաբար տեղի ունեցող ամենաբարձր մակարդակի հանդիպումներն էին: Այսպես՝ 1996-98 թթ. Հայաստանի նախագահին ինն անգամ եղավ ՌԴ-ում, որտեղ հանդիպումներ ունեցավ Բ. Ելցինի, Վ. Չեռնոմիրոֆինի, Ե. Պրիմակովի և ՌԴ այլ ղեկավարների հետ³: 1997 թ. օգոստոսին երկու երկրների նախագահները ստորագրեցին հայ-ռուսական բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագիր, որը պատմության մեջ մտավ «Մեծ պայմանագիր անունով»: Փոխադարձ այցելությունների և քաղաքական հարաբերությունների խորացման շնորհիվ զգալիորեն ընդլայնվեց և նոր թափ ստացավ երկկողմանի ռազմատեխնիկական համագործակցությունը: 1995 թ. սկսած Հայաստանի տարածքում անցկացվել են ամենամյա զորավարժություններ, կատարելագործվել է ՀՕՊ միավորված համակարգը: 1997թ. պայմանագրի դրույթները բողոք առաջացրին ադրբեջանական կողմի մոտ, որոնք մտավախություն էին հայտնում, որ արցախյան հակամարտության հետ կապված այդ պայմանագիրն ուղղված է իրենց դեմ: Դրան նպաստեց ռուսաստանյան մամուլում արհեստականորեն բարձրացված աղմուկը ՀՀ-ին իբրև «չարտոնված զենք» վաճառելու մասին: Այս գործում անմասն չէին Թուրքիայի և Ադրբեջանի հատուկ ծառայությունները: ՌԴ Պետդումայի կողմից պայմանագրի վավերացումից հետո հայ-ռուսական կողմերը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որ պայմանագիրն ուղղված չէ կոնկրետ

¹ Տե՛ս Սադոյան Բ., Անդրկովկասյան խնդիրները աշխարհաքաղաքական հարաբերությունների կիզակետում, ՌԱՀՀԿ, «Հայացք Երևանից», N 3, Երևան, 1997, էջ 31-41

² Տե՛ս, Տասնամյա հանրագումար, / ՌԱՀՀԿ/, Երևան, 2004, էջ 364-367:

³ ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 283, թ.69

պետության դեմ և ելնում է ընդհանուր դրույթներից¹: Սակայն հասկանալի է, որ այն ոչ միայն Թուրքիայից Հայաստանի սահմանների պաշտպանության և Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգության խնդիրներին էր միտված, այլև ի դեմս Հայաստանում տեղակայված ռուսական 102-րդ ռազմական բազայի վերահսկողություն էր սահմանում Մերձավոր Արևելքում հենց ՀԱՊԿ-ի շրջանակներում:

Հետխորհրդային առաջին տասնամյակի վերջում ակնհայտ դարձավ, որ ՌԴ-ին չհաջողվեց փոխակերպել ԱՊՀ տարածքում կայունության երաշխավորի իր գործառնությանը դերը կազմակերպական գերակայության²: Որոշ առումով խորհրդային Միության իրավահաջորդ դարձած ԱՊՀ-ին այդպես էլ չհաջողվեց իրագործել համահավաք կազմակերպության բովանդակային գործառնություն: Արդյունքում նախագծերի իրագործման մեխանիզմները հայտնվեցին բազմաչափ կազմակերպությունների ծիրում, մասնավորապես՝ ՎՈՒԱՄ/1997թ. Վրաստան, ՌԲկրաինա, Ադրբեջան, Մոլդովա/, ՎՈՒՈՒԱՄ/1999-200 1թթ. Վրաստան, ՌԲկրաինա, ՌԳբեկստան, Ադրբեջան, Մոլդովա/, ՇՀԿ/Շանհայյան համագործակցության կազմակերպություն/, ՄՄ/Մաքսային Միություն/, այդ թվում նաև ՀԱՊԿ/Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպություն/: Վերջինի հավակնությունների շրջանակներում է անվտանգության բնագավառի հանգուցային դերակատարի ստանձնումը:

ՀԱՊԿ հիմնարար փաստաթուղթ է համարվում դեռևս 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված «Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը» /ՀԱՊԿ/, որին իրենց մասնակցությունն էին բերել նախկին ԽՍՀՄ անդամ 15 հանրապետություններից միայն 9-ը՝ Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը: 1993 թ. սեպտեմբերին նրան միացան Ադրբեջանը, դեկտեմբերին՝ Վրաստանը և Բելոռուսիան: Պայմանագիրն ուժի մեջ մտավ բոլոր երկրների համար 1994 թ. ապրիլին հինգ տարի ժամկետով: Պայմանագրի համաձայն՝ մասնակից երկրները ապահովում են իրենց անվտանգությունը կոլեկտիվ- հավաքական հիմքի վրա:

Հատկանշական է, որ ՀԱՊԿ գործունեության իրական հենասյուն հանդիսացող Հավաքական անվտանգության մասին պայմանագրի չորրորդ հոդվածում հստակ նշվում է, որ մասնակից պետություններից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի դեպքում, բոլոր մյուս մասնակից պետությունները տրամադրում են նրան անհրաժեշտ օգնություն, այդ թվում նաև ռազմական, ինչպես նաև ցուցաբերում օժանդակություն իրանց տրամադրության տակ գտնվող միջոցներով:³

Պայմանագիրը պարտավորեցնում է ՀԱՊԿ անդամ պետություններին անհապաղ ձեռք առնել ինչպես ռազմական, այդպես էլ քաղաքական միջոցներ հնարավոր ագրեսիան կասեցնելու, կամ էլ հետ մղելու համար:

Հատկանշական է, որ այդ գործողությունների իրագործումը պիտի համապատասխանի ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածի դրույթներին⁴, որոնց էությունն այն է, որ անհրաժեշտ է միջազգային օրենսդրության շրջանակներում սահմանված ժամկետներում ընդունված որոշման մասին տեղեկացնել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին:

Փորձագիտական շրջանակներում ՀԱՊԿ-ի 4-րդ հոդվածից բացի բովանդակային կարևորություն ունի նաև 2-րդ հոդվածը, համաձայն որի՝ կազմակերպության անդամ պետություններից որևիցե մեկի դեմ ռազմական սպառնալիքի դեպքում մյուս անդամները պարտավորվում են անհապաղ գործադրել համատեղ խորհրդակցությունների

¹ St' u Armenia: «Проблемы независимого развития» Российский институт стратегических исследований, Москва, 1998, էջ 561-562:

² St' u Фененко А., Американский фактор и кризис трансевразийского пространства. Центральная Азия и Кавказ, И3/27, 2003, с. 19-26.

³ http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126 «Համատեղ անվտանգության մասին պայմանագիր», ՀԱՊԿ պաշտոնական կայք, /18.04.2017/:

⁴ Скотников Л.А., “Право на самооборону и новые императивы безопасности”, “Международная жизнь” N 9 , сентябрь 2004.

մեխանիզմը և համակարգելով սեփական դիրքորոշումը՝ միջոցներ ձեռք առնել ստեղծված վտանգները չեզոքացնելու նպատակով:¹

Հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների դինամիկան՝ կարելի է պնդել, որ հիշյալ պայմանագրի որոշ դրույթների համապատասխանեցումը ժամանակի պահանջներին ուղղակի անհրաժեշտություն է:

Պայմանագրի 4-րդ հոդվածում խոսքը գնում է պետության կամ պետությունների խմբի կողմից ՀԱՊԿ անդամ որևէ մեկի դեմ հնարավոր հարձակման մասին, ուստի այդ հանգամանքի բացակայությունը, ըստ որոշ ներքին ընդդիմադիրների, չի արտոնում ՀԱՊԿ-ին միջամտելու հայ-ադրբեջանական սահմանային «միջադեպերին»:

Առաջին հայացքից վերոգրյալը կարելի է համարել պայմանագրի տառին համահունչ, սակայն 2-րդ հոդվածում հստակ խոսվում է ՀԱՊԿ անդամ պետության անվտանգությանը սպառնալու և դրա հակազդման հաջորդող համապատասխան միջոցառումների վերաբերյալ, որն ինչպես տեսնում ենք այդպես էլ չի գործում:

Այսպիսով՝ ստացվում է մի պատկեր, երբ ՀԱՊԿ շրջանակներում պայմանագրի գրավոր, փաստաթղթային պարտավորություններն ավելին են, քան նրա գործառնական լիազորությունների շրջանակը պրակտիկ իրականությունում:

Զարդարացված ակնկալիքների, միգուցե նաև ՀԱՊԿ ներքին թուլության պատճառով էր, որ Ադրբեջանը, Ուզբեկստանն ու Վրաստանը 1999 թ. լքեցին հիշյալ կազմակերպության շարքերը: Դա այն դեպքում, երբ ՀԱՊԿ-ի շրջանակներում այս կառույցի անդամ երկրները կարող են Ռուսաստանից զենք գնել ներուսաստանյան գներով, այսինքն՝ ավելի էժան, քան այդ հնարավորություններն ունեն ռազմական այս կառույցի ոչ անդամ երկրները: Այս համատեքստում առնվազն կասկածելի է դառնում ռուսական կառավարող քաղաքական, հասարակական շրջանակների կողմից ներկայումս հաճախ հրապարակ նետվող այն մեկնաբանությունը, թե Ադրբեջանին զենք վաճառելը բացառապես բիզնես նպատակներ է հետապնդում: Մի կողմից՝ այս հիշյալ բացատրությունը, մյուս կողմից՝ ՌԴ՝ իբրև ՀՀ ռազմավարական դաշնակցի պատեհապաշտ մոտեցումներն ու կիսատ-պռատ քայլերն, անհասցե քննադատությունը Ադրբեջանի ղեկավարության ռազմաշունչ հայտարարություններին ու բացահայտ սադրանքներին, անվստահության մթնոլորտ են ստեղծում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շրջանում ՌԴ-ի հանդեպ դրանից բխող անցանկալի հետևանքներով: Ադրբեջանին զենքի վաճառքը, հատկապես 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմից հետո առավել ևս դուրս է ողջամտությունից և հակասում է հենց ՌԴ-ի կողմից ՀԱՊԿ շրջանակներում ընդունած պարտավորություններին, այն է՝ ապահովել տարածաշրջանում անվտանգությունն ու կայուն խաղաղ զարգացումը: Ըստ փորձագետների՝ զենքի մատակարարումը Ադրբեջանին կարող է չար կատակ դառնալ ՌԴ-ի համար:

Հատկանշական է, որ ներհասարակական դիսկուրսի թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական կողմերի հռետորական հարցադրումներից էր / և է / հնարավոր մարտական գործողությունների ժամանակ ՀԱՊԿ ռազմական միջամտության հավանականությունը:

Հարկ է ընդգծել, որ ՀԱՊԿ-ում երբևէ չի տիրել միանշանակ հայամետ, կամ էլ ադրբեջանամետ դիրքորոշում, ինչի վերաբերյալ անուղղակի փաստել է նաև այդ ռազմաքաղաքական կազմակերպության այլևս նախկին քարտուղար Նիկոլայ Բորոյուժան 2006 թ. հունվարի 17-ին «Էխո Մոսկվի» լրատվականին տված հարցազրույցում: Նա նշել էր, որ ռազմական միջամտության խնդիրն այնքան զգայուն է, որ ինքը նույնիսկ դժվարանում է մեկնաբանել:

ՀԱՊԿ-ը գործնականում դժվարանում էր նույնիսկ սաստել ինչպես Ադրբեջանի Հանրապետության բացահայտ սպառնալիքներն, այդպես էլ պարբերաբար կրկնվող հետախուզամարտարշավային բնույթի հարձակումներն այդ կառույցին անդամակցող պետության հանդեպ: Արդյունքում ստացվում է, որ պայմանագիրը փաստաթղթային

¹http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126 «Համատեղ անվտանգության մասին պայմանագիր», ՀԱՊԿ պաշտոնական կայք, /18.04.2017/:

ծնակերպումներում շատ ավելի ազդու ու պարտավորեցնող է, քան գործնականում: Այդ ոչ այլ ինչ է, քան իրականության մեջ Պայմանագրի դրույթների անթաքույց խախտում, հանգամանք, որը ոչ միայն վստահություն չի ներշնչում ՀԱՊԿ-ի նկատմամբ, այլև կասկածի տակ է դնում այդ ռազմաքաղաքական կառույցի գործունեության արդյունավետությունը: Նմանաբովանդակ մեկնաբանություններն առկա են հասարակության լայն շրջանակների հոգեբանական ընկալումներում, որի համար ՀԱՊԿ-ն այդպես էլ մնաց անգործունակ:

Վերոշարադրյալի տողատակերում նշմարվող կասկածներին առարկայական հիմնավորում հաղորդեց նաև 2016 թ. ապրիլին Արցախի դեմ ադրբեջանական ահաբեկչական ագրեսիայի հետևանքով սկսված մարտական գործողությունների ժամանակ ՀԱՊԿ ռազմական մեքենայի առարկայական անգործությունը: Դա մեծապես պայմանավորված է նաև նրանով, որ ՀԱՊԿ ասիմետրիկ կառույց է, և նրա անդամներն առավելապես փոխկապակցված են Ռուսաստանի Դաշնության, քան միմյանց հետ: Ավելին, նույն ապրիլյան պատերազմի սկզբին Ռուսաստանից հնչած միակ հայտարարությունն այն էր, որ Ադրբեջանի գործողությունները միայն սրում են իրավիճակը Լեռնային Ղարաբաղում: Դրան հաջորդեցին ռուսական կողմի չափակարգված, չեզոք, բալանսավորված, հերթապահ հայտարարությունները, իսկ ՀԱՊԿ անդամ երկիր Բելոռուսը գերադասեց Ադրբեջանի ղեկավարության հետ քննարկել իրավիճակն ու հիշել երկրի «տարածքային ամբողջականության» պահպանման անհրաժեշտությունը:

Հաճախ լինում է, որ ՀԱՊԿ անդամ երկրները նույնիսկ ունենում են տրամագծորեն տարբեր դիրքորոշում բազմապիսի, այդ թվում՝ ռազմաքաղաքական նշանակության հարցերի վերաբերյալ, ինչը լուրջ անջրպետ է առաջացնում նրանց փոխհարաբերություններում: Բլոգեր-լրագրող Ալեքսանդր Լապչինին Բելոռուսի իշխանությունների կողմից ժողովրդավարության բոլոր չափանիշներն ամեն օր ոտնահարող Ադրբեջանին արտահանձնելը վերը նշվածի անհերքելի ապացույցն է:

Հարկ է նշել, որ մինչև 2010 թ. ՀԱՊԿ-ում վերջնական որոշումները կայացվում էին անդամ պետությունների լիակատար համաձայնությամբ, ինչի բացակայության ժամանակ առաջանում էր փակուղային իրավիճակ: Յետագայում որոշվեց, որ անդամ պետություններն իրավասու են մնալ ձեռնպահ, եթե քվեարկության ներկայացվող որոշման նախագիծը չի հակասում նրա պետական շահերին, և նա սկզբունքորեն դեմ չէ դրան: Այսպիսով՝ ձևավորվեց մի իրավիճակ, երբ որոշումները հնարավոր դարձավ ընդունել ոչ թե անդամների լիակատար համաձայնությամբ, այլ բացարձակ մեծամասնությամբ: Սրա արդյունքում ընդլայնվում էին ՌԴ-ի հնարավորությունները որոշումներ ընդունելու առումով:

Առաջին հայացքից կարելի է տեսակետ զարգացնել առ այն, որ ՀԱՊԿ-ն այդպես էլ չվերածվեց անդամ պետությունների անվտանգության երաշխավորի համապարփակ և ընդհանուր շահեր հետապնդող կառույցի: ՀԱՊԿ-ն իր ներքին տրամաբանությամբ ունի որոշակի երկփեղկում: Նրա ռազմական մեքենան ամենայն հավանականությամբ կգործի նախկին ԽՍՀՄ հարավային թևի տարածքից դուրս, քան ԱՊՀ անդամների միջև ռազմական նշանակության խնդիրները հանգուցալուծելիս: Դա բացատրվում է նրանով, որ ՀԱՊԿ շարժիչ ուժ ու բովանդակություն հաղորդող ՌԴ-ն նախկին ԽՍՀՄ տարածքը դիտարկում է որպես իր աշխարհաքաղաքական նշանակալիության ապահովման կարևորագույն բաղադրյալ: Ռուսաստանի ռազմական անվտանգության ապահովման տեսանկյունից հիշյալ տիրույթում պաշտոնական Մոսկվայի գերակայությունը Կրեմլում դիտարկվում է որպես կենսական անհրաժեշտություն:

Ընդհանրապես ցանկացած տիպի և հատկապես ռազմական համագործակցության կամ զորքերի համատեղ կիրառման վերաբերյալ պայմանագրերը կենսագործելի են միայն կողմերի շահերի զուգորդման պայմաններում: Այդ առումով ԱՊՀ ներսում ՀԱՊԿ ռազմուժի կիրառումը կոնկրետ Ադրբեջանի դեմ համապատասխանում է միայն Հայաստանի շահերին, որի պատճառով էլ նրա գործադրումը հանուն ՀՀ-ի, ուժերի նմանատիպ դասավորվածության պայմաններում գրեթե իրատեսական չէ:

Բոլորովին այլ իրավիճակ է դիտարկվում հայ-ռուսական դաշնակցության թուրքական ռազմավտանգի ուղղության պաշտպանության առումով, ուր երկու պետությունների ռազմավարական շահերի համընկնումն, ամենայն հավանականությամբ, երաշխավորում է դաշնակցային պայմանագրի կենսագործումը: Ուշագրավ է, որ թուրքական ռազմավտանգ ուղղությունում ՀԱՊԿ անդամ երկրներից համընկնում են միայն ՀՀ և ՌԴ շահերը: Մյուս անդամ պետություններից Ղազախստանը, Տաջիկստանը և Բելառուսը թուրքիայի դեմ հանուն ՀՀ-ի պայքարելու առումով, կամ էլ ձևակերպենք՝ ՀԱՊԿ-ի հարավկովկասյան թևի անվտանգության ապահովման հարցում ունեն բոլորովին այլ, թերևս ոչ հայամետ պատկերացումներ:

Հարավկովկասյան թևի, այդ թվում սեփական անվտանգության ապահովման հրամայականից դրդված Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ շրջանակներում շարունակում է ակտիվորեն համագործակցել դաշնակից ՌԴ-ի հետ, ինչը հիմնավորվում է ինչպես ռազմատեխնիկական համագործակցության, այդպես էլ թուրքիայի հնարավոր ոտնձգություններին դիմակայելու անհրաժեշտությամբ:

Վստահաբար կարելի է պնդել, որ իր թերություններով հանդերձ ՀԱՊԿ-ին անդամակցելը Հայաստանի Հանրապետության համար անհրաժեշտ է և խիստ օգտակար:

Едуард Зограбян, Стратегические представления о военном вмешательстве ОДКБ в армяно-азербайджанском конфликте,- В статье рассматривается 25-ти летняя деятельность ОДКБ с точки зрения одного из его ключевых ролей военного вмешательства в армяно-азербайджанском конфликте в качестве международно признанной в военно-политической структуре.

Убедительно показано, что обязательства ОДКБ по документам выходят за рамки его оперативных полномочий. В риторике социального дискурса армянского и азербайджанского обществ часто звучит вероятность вмешательства ОДКБ в военных действиях. Однако как уже упоминалось в статье этот вопрос очень чувствительный и не имеет четкого подхода, который особенно проявился во время начатый Азербайджаном четырехдневной террористической войны в апреле 2016 года.

Eduard Zohrabyan, On Csto military/ interference and its strategic perception in Armenian-Azeri Conflict,-The article presents considerations on the military component in Armenian-Azerbaijan conflict viewed as one of the pivotal activity roles of the 25-year old CSTO which nowadays is a celebrated military-political international organization. We convincingly show that the CSTO responsibilities registered in the documents are more fluent than its actual activity. The CSTO armed interference is mentioned as a real possibility in military activities by both the Armenian and the Azerbaijan parties. But, as discussed in the article, the issue is a very sensitive one and requires a rather subtle handling. Up to now this organization has not adopted a fluent approach towards the issue, a fact which manifested itself during the four-days' terroristic war launched by Azerbaijan in April 2016.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան, ԱՐԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՒՎԻՆ.....	3
Արտակ Մովսիսյան, ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ.....	7
Հենգել Մանուչարյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ.....	13
Ֆելիքս Մովսիսյան, ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	23
Валерий Тунян, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ И НАЦИОНАЛЬНЫЕ СОВЕЩАНИЯ В 1914-1917 ГГ.	41
Արման Եղիազարյան, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՆՔՈՒՄ (ԼԻՔԱՆԱՆԻ ԵՎ ՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	50
Սամվել Պողոսյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ.....	67
Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան, ԱԴՔՅՈՒՐ ՍԵՐՈՔ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ).....	81
Սամսոն Քառայան, ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	91
Վահագն Հակոբյան, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ.....	96
Կարեն Խաչատրյան, Գագիկ Ժամհարյան, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ).....	108
Էդուարդ Զոհրաբյան, ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ.....	115
Դավիթ Թինոյան, ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆԴՈՒԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆԴՈՒԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	121
Էմմա Ստեփանյան, ԱՄԵՐԻԿԱՀԱՅ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԵՍԸ (1905-1907 ԹԹ.).....	128
Վարդիթեր Աբրահամյան, X-XI ԴԱՐԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԶԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՍԵՂԾՎԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻՎԱՐՈՒՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՊՐՏՈՒՄ.....	135
Լիլիթ Մելիքյան, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	143
Գուրգեն Մուրադյան, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	148
Դավիթ Կարապետյան, ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	153
Էդուարդ Հովհաննիսյան, ԴԱՐԱԲԱՂԻ /ԱՐՑԱՆԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ».....	159
Տաթևիկ Մինասյան, ՀԱՅՈՒՎԻՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ (XIX ԴԱՐԻ ՎԵՐԶ-XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	166
Արամ Խաչատրյան, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ.....	174
Սուսաննա Առաքելյան, ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ.....	185
Նարինե Նուշերվանյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐԶԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	191

Էդուարդ Կեսոյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	196
Աստղիկ Մովսիսյան, ՀՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ.	206
Լուսինե Գրիգորյան, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.)	215
Մելիք Հովսեփյան, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.)	223
Լիլիթ Մատինյան, Հենրիկ Աբրահամյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՆՈՒՆԴ	229
Սոնա Մելքոնյան, Էթնիկ ջՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐՔԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏԱՄՔ (1988-1991 ԹԹ.)	237
Դավիթ Զուլհալյան, Կարինե Ասատրյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	242
Նժդեհ Հովսեփյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ.	250
Վահե Հովսեփյան, ԽՈՋԱԼՈՒԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ	261
Վարդան Մակիճյան, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	269
Գեղամ Ասատրյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	273
Աննակ Սարգսյան, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ.	281
Гаяне Солахян, ЕВРАЗИЙСТВО В СОВРЕМЕННОМ ИДЕЙНО – ПОЛИТИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ РОССИИ	289
Ռոման Գազանջյան, ՄՈՆԻՐՈՅԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԱՄՆ-Ի XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ	295
Զուլիետա Կճանյան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԿԱՆԱԴԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ԼՈՐԴ ԴԱՐԵՄԸ	302
Ժաննա Հարությունյան, ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼԻ ԱՖՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	310
Արսեն Զուլֆալալյան, ԶՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ	316
Георгий Коларов, МАОИЗМ В ЛАТИНСКОЙ АМЕРИКЕ. СЕНДЕРИЗМ, КАК МАОИЗМ КОНЦА XX ВЕКА	322
Անդրանիկ Առաքելյան, ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.)	328
Աշոտ Թովմասյան, ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	333
Արշալույս Տետեյան, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԴՐՔԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	337
Միգր Հովհաննիսյան, ԳԻՏԱԿԱՆ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	344
 ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
Ռաֆիկ Նահապետյան, ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵՎՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ	349
Սաակ Տարոնցի, ԱՐԵՎ-ՍԿԱԿԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ	355

Արմինե Գաբրիելյան, ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.).....	372
Ռայա Սարգսյան, ՄԻՐԱՔ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՁԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ	384
Հասմիկ Հարությունյան, ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶԿԱԴԱԿԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ).....	388
Արուսյակ Ղարիբյան, ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ	401
Մերի Ղալլաբյան, ԱԿԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ	407
Մարինե Հարությունյան, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ	411

ԱՐԿԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Անի Նազարյան, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ	416
Siranuysh Araqelyan, ON A KHACHKAR (STONE CROSS) INSCRIPTION IN ARINJ	423
Garik Atanesyan, NEW INTERPRETATIONS OF PUBLIC FUNCTIONS OF MONUMENTS IN THE YEREVAN’S CONTEMPORARY PUBLIC DISCOURSE.....	427
Հայկազ Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսյան, Սահակ Հովհաննիսյան, Մարինե Մինասյան, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	434
Հայկուլի Մուրադյան, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	441
Ամբատ Հովհաննիսյան, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (ՆՈԹԵՐ ՈՒԼԷԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»՝ ԱՐԱՄ ԹՈՓՁՅԱՆԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ).....	448
Анаит Зурабян, «МОДЕЛЬ ПУТИ» И ЕЁ ОТРАЖЕНИЕ В РОМАНЕ «ЖИЗНЬ И СУДЬБА»	462
Դիանա Հակոբյան, ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ	467
Arevik Minasián, ANÁLISIS SEMÁNTICO DE LOS REFRANES Y PROVERBIOS CON EL COMPONENTE “PERRO” EN ESPAÑOL Y ARMENIO.....	473
Mariana Yepremián, ANÁLISIS SEMÁNTICO - COMPARATIVO DE LOS REFRANES Y PROVERBIOS QUE DENOTAN EL CONCEPTO GATO EN ESPAÑOL Y ARMENIO.....	482
Ասյա Ղարիբյան, ՎՐԱՑԵՐԵՆԻ ՆԱԽԱԲԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ	491
Լիանա Մալխասյան, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	497

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՐԺԵՔ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԱՍԱՄԱՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	503
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՌԷՆԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ.....	506

ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ

САРКИС СУРЕНОВИЧ КАЗАРОВ	512
--------------------------------	-----

ՀԱԿԵՐԺԻ ԶԱՍՓՈՐԴ

ԷԴՎԱՐԴ ԳԱՆՈՒՄՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ.....	514
--------------------------------	-----

ՀԱԿՈՒՔ ԲԱՂՂԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ	516
<i>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....</i>	<i>519</i>